ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/01

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Չարենցավանի համայնքապետարան

Բողոք բերող՝ «Լեմուր» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Լեմուր» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 12.01.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել չեղյալ հայտարարել «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում անցկացրած բանակցությունները և «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.01.2021թ.-ին:

13.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/01 համարի ծածկագիրը:

20.01.2021թ.-ին և 29.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.01.2021թ.-ին:

2. **«Լեմուր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Լեմուր» ՍՊԸ-ն 12.01.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Չարենցավանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով մրցույթի շրջանակներում 2020թ. դեկտեմբերի 25-ին էլեկտրոնային ձևով ծանուցվել է բավարար հայտեր ներկայացրած մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի, վայրի և անցկացման կարգի մասին՝ առաջարկելով ցանկության դեպքում ներկայանալ Չարենցավանի Համայնքապետարան, կամ մինչև սահմանված ժամկետի ավարտը, որը սահմանվել էր դեկտեմբերի 29-ը ժամի 12:00, նոր գնային առաջարկը էլեկտրոնային ձևով ուղարկվել gaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին: «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկն ուղղարկվել էր վերոհիշյալ էլեկտրոնային փոստի հասցեին 29.12.2020թ.-ին, ժամը 11:11-ին՝ 4 200 000 ՀՀ դրամի չափով, որից հետո ժամը 11:15-ին պատվիրատուի կողմից ստացել ենք ծանուցում այն մասին, որ բանակցությունները տևելու են մինչև ժամը 12:30-ը: Այնուհետև, ժամը 12:28-ին, մեր էլեկտրանային փոստի հասցեին ստացել ենք նամակ հետևյալ բովանդակությամբ. «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4.190.000 ՀՀ դրամ:

Հիշեցնենք, որ ի սկզբանե պատվիրատուի կողմից բանակցությունների համար վերջնաժամկետ էր սահմանված դեկտեմբերի 29-ը, ժամը 12:00-ն և «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ»

ՍՊԸ-ի կողմից ժամը 12:28-ին առաջարկված գնառաջարկը արդեն իսկ ուշացած էր և չէր կարող ընդունելի լինել պատվիրատու կողմից:

Ի պատասխան տվյալ նամակի «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ժամը 12:32-ին առաջարկվել է նոր իջեցված գնառաջարկ՝ 4.150.000 ՀՀ դրամի չափով, որը ևս ընդունվել էր պատվիրատուի կողմից, չնայած, որ փոփոխված բանակցությունների վերջնաժամկետն սահմանված էր ժամի 12:30-ը: Ի պատասխան, ժամը 12:37-ին ստացել ենք նամակ, որի մեջ նշված էր, որ «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4.100.000 ՀՀ դրամ: «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ժամը 12:40-ին առաջարկվել է նոր իջեցված գին՝ 4.000.000 ՀՀ դրամի չափով: Այնուհետև, ժամը 12:54-ին, պատվիրատուի կողմից ստացել ենք նամակ, որի մեջ նշված էր, որ բանակցությունները տևելու են մինչև ժամը 13:00-ն: Ժամը 12:58-ին նոր նամակ ենք ստացել պատվիրատուի կողմից, որը վերաուղարկված էր hs.partners@maii.ru էլեկտրոնային փոստի հասցեից՝ պատվիրատուի պաշտոնական qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոսթի հասցեին, մրցույթի հետ որևէ կապ չունեցող «ԷՅՉ ԷՍ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ-ի կողմից և կցված էր «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից առաջարկող նոր գնառաջարկը՝ 3.900.000 ՀՀ դրամի չափով: Մի քանի վարկյան անց՝ 12:59 ստացել ենք ծանուցում պատվիրատուի կողմից այն մասին, որ բանակցությունները ավարտված են, չնայած այն փաստին, որ 2-րդ անգամ փոփոխված վերջնաժամկետն է սահմանվել ժամը 13:00-ն, այսպիսով ֆիզիկապես ժամանակ չթողնելով «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ին գնառաջարկ կատարելու համար: «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նոր գնառաջարկ է կատարվել ժամը 13:02-ին, սակայն այն արդեն չի ընդունվել պատվիրատուի կողմից, չնայած, որ ժամը 12:32-ի ուղղարկված գնառաջարկը, նմանապես՝ 2 րոպե ուշացումով, ընդունվել էր:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պատվիրատուի կողմից բանակցությունների անցկացման կարգը չի պահպանվել և խախտվել են մի շարք մրցակցային դրույթներ: «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին մասի համաձայն. 1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:»:

Ելնելով վերոգրյալից, «Լեմուր» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել չեղյալ հայտարարել «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում անցկացրած բանակցությունները և «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. **<u>Չարենցավանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**.

Բողոքներ քննող անձը 13.01.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/215-2021 գրությամբ դիմել է Չարենցավանի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 12.01.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 14.01.2021թ.-ին թիվ 37-21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից 12.01.2021թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և Չարենցավանի համայնքապետարանի գրավոր դիրքորոշումը:

Չարենցավանի համայնքապետարանը միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնման նպատակով կազմակերպել և իրականացրել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2020-12-16 10:00:00-ից մինչև 2020-12-23 12:00:00 ժամը ներառյալ:

«ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ «Ազնիվ Մուրադյան» Ա/Ձ-ն, «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ն, «Մալեկա» ՍՊԸ-ն, «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն, «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 2 որոշմամբ մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով այն

հանգամանքը, որ գնման գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով և այն, որ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից (ինչպես նաև համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչներից) ոչ մեկը մասնակից չի եղել գնահատող հանձնաժողովի նիստին՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Բանակցություններին մասնակցելու նպատակով բոլոր մասնակիցներին հնարավորություն է տրվել բանակցելու ինչպես հեռանար, այնպես էլ ֆիզիկապես ներկա գտնվելու միջոցով: Միաժամանակ հայտնում և հավաստում ենք, որ բանակցությունների ընթացքում յուրաքանչյուր նվազեցված գնային առաջարկի մասին տեղեկատվությունը էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրվել է ընթացակարգի բոլոր մասնակիցներին4 անկախ նրանց մասնակցելու կամ չմասնակցելու հանգամանքից: Միաժամանակ հայտնում ենք, որ բանակցություններին մասնակցելու իրավունքից զրկված չի եղել ոչ մի մասնակից և «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ն ինտենսիվ մասնակցել է ամբողջ գործընթացին մինչև սահմանված ժամկետի ավարտը:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 08-ի թիվ 3 որոշմամբ «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է անգործության ժամկետ:

Վերը նշված գործողությունները կատարելով Չարենցավանի համայնքապետարանը նպատակ է ունեցել իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում ձեռքբերել կարիքին համապատասխան ծառայություններ՝ համարժեք հատուցմամբ, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման եղանակով:

Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն հիմնվել է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ուսումնասիրելով «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից 12.01.2021թ. ներկայացված բողոքը, գտնում ենք, որ «ԼԵՄՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի կողմից իրականացրած իրավաչափ գործողությունները։»:

4. **<u>ԳԲՔԱ-ԼՕ</u>**-2021/01 **<u>բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Չարենցավանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.12.2020թ.-ին հայտարարվել է «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Լեմուր» ՍՊԸ-ն և «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, որոշել է նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին: Բանակցությունների վարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 29.12.2020թ.-ի ժամը 12:00-ն:

iv. Հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցներին ներկայացվել է նաև ծանուցում հետևյալ բովանդակությամբ.

«Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, գները նվազեցնելու նպատակով կվարվեն գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, որը

կկայանա 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին Չարենցավանի համայնքապետարանում՝ ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 հասցեում: Գների նվազեցման միաժամանակյա բանակցություններին մասնակցելու ցանկության դեպքում ներկայանալ Չարենցավանի համայնքապետարան, կամ մինչև սահմանված ժամկետի ավարտը, Ձեր նոր գնային առաջարկը՝ էլեկտրոնային ստորագրությամբ, կարող եք ուղարկել qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին, որը կհրապարակվի ընթացակարգի մասնակիցների համար: Բանակցություններին ներկա գտնվելու նպատակով, վերջնաժամկետ է սահմանվում 2020 թվականի դեկտեմբերի 29-ը ժամը 12:00-ն: Սահմանված ժամկետից ուշ բանակցություններին ներկայանալու դեպքում կզրկվեք միաժամանակյա բանակցություններին մասնակցության իրավունքից:»:

v. 29.11.2020թ.-ին ժամը 11:11-ին «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է բանակցությունների մասնակցության համար ներկայացված նոր գնային առաջարկը՝ PDF տարբերակով, որը Հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը՝ ժամը 11:13-ին ուղարկվել է Ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին, իսկ 11:15-ին կրկին հաղորդագրություն է ուղարկել մասնակիցներին և հայտնել է, որ եթե առկա են նոր նվազեցված գնային առաջարկներ, ապա անհրաժեշտ է ուղարկել դրանք, քանի որ բանակցությունները տևելու են մինչև ժամը 12:30-ը: Այնուհետև ժամը 12:28-ին Հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցներին ուղարկվել է հաղորդագրություն, որով հայտնել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4 190 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ ժամը 12:32-ին հայտնել է, որ առաջարկում է 4 150 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը 12:34-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղարը ժամը 12:37-ին մասնակիցներին ուղարկել է հաղորդագրություն, որով հայտնել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4 100 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ-ն ժամը 12:40-ին հայտնել է, որ առաջարկում է 4 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը 12:49-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղարը ժամը 12:54-ին հաղորդագրություն է ուղարկել մասնակիցներին և հայտնել է, որ եթե առկա են նոր նվազեցված գնային առաջարկներ, ապա անհրաժեշտ է ուղարկել դրանք, քանի որ բանակցությունները տևելու է մինչև ժամը 13:00-ը, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ-ն ժամը 12:54-ին կրկին հայտնել է, որ առաջարկում է 4 000 000 ՀՀ դրամի գնային

առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը 12:55-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղարի կողմից 12:58-ի մասնակիցներին է ուղակվում սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտ չներկայացրած «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի hs.partners@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից, քարտուղարի qaxgnumner@mail.ru էլեկտրոնային լիոստի հասցեին ուղարկված հաղորդագրություն, որի համաձայն վերոնշյալ ընկերությունը ներկայացրել է նոր գնային առաջարկ PDF ֆայլի միջոցով, որով չի արտացոլվում ներկայացված գումարի չափը: Այնուհետև Հանձնաժողովի քարտուղաի կողմից 12:59-ի մասնակիցներին է ուղակվում բանակցություններն ավարտված լինելու մասին հաղորդագրություն, որից հետո՝ ժամը 13:02-ին «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3 800 000 ՀՀ դրամի գնային առաջարկը չի դիտարկվում:

vi. Պատվիրատուի կողմից՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված Բողոքներ քննող անձին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 3 900 000 ՀՀ դրամի նոր գնային առաջարկ, որը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Գեղամ Հարությունյանի կողմից 29.12.2020թ.-ին ժամը 12:56-ին:

vii. Հանձնաժողովի 08.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 3 900 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, ճանաչվել է ընտրված մասնակից:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 12.01.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Չարենցավանի համայնքապետարանի կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.12.2020թ.-ին հայտարարված «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ

բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու կամ վերջիններիս ներկայացուցիչների՝ բանակցություններին մասնակցելու (բանակցություններ վարելու) իրավասությամբ օժտված չլինելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Չարենցավանի համայնքապետարանի կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով 16.12.2020թ.-ին հայտարարված «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լեմուր» ՍՊԸ-ն և «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 25.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ էլեկտրոնային ձևով ծանուցվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որի վարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 29.12.2020թ.-ի ժամը 12:00-ն: Սակայն Հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցների ներկայացված ծանուցմամբ նշվել է, որ գները նվազեցնելու նպատակով միաժամանակյա բանակցությունները կայանալու է 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին, իսկ բանակցություններին ներկա գտնվելու նպատակով, վերջնաժամկետ է սահմանվում 2020 թվականի դեկտեմբերի 29-ը ժամը 12:00-ն:

29.11.2020թ.-ին ժամը 11:11-ին «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է բանակցությունների մասնակցության համար ներկայացված նոր գնային առաջարկը, PDF տարբերակով, որը Հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը՝ ժամը 11:13-ին ուղարկվել է Ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին, իսկ 11:15-ին քարտուղարը կրկին հաղորդագրություն է ուղարկել մասնակիցներին և հայտնել է, որ եթե առկա են նոր նվազեցված գնային առաջարկներ, ապա անհրաժեշտ է ուղարկել դրանք, քանի որ բանակցությունները տևելու է մինչև ժամը 12:30-ը: Այնուհետև ժամը 12:28-ին Հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցներին ուղարկվել է հաղորդագրություն, որով հայտնել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4 190 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ ժամը 12:32-ին հայտնել է, որ առաջարկում է 4 150 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը

12:34-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղարը ժամը 12:37-ին մասնակիցներին ուղարկել է հաղորդագրություն, որով հայտնել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին և առաջարկել է 4 100 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ-ն ժամը 12:40-ին հայտնել է, որ առաջարկում է 4 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը 12:49-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղարը ժամը 12:54-ին հաղորդագրություն է ուղարկել մասնակիցներին և հայտնել է, որ եթե առկա են նոր նվազեցված գնային առաջարկներ, ապա անհրաժեշտ է ուղարկել դրանք, քանի որ բանակցությունները տևելու է մինչև ժամը 13:00-ը, որին ի պատասխան «Լեմուր» ՍՊԸ-ն ժամը 12:54-ին կրկին հայտնել է, որ առաջարկում է 4 000 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որը քարտուղարի կողմից ժամը 12:55-ին ուղարկվել է բոլոր մասնակիցներին: Հանձնաժողովի քարտուղաի կողմից 12:58-ի մասնակիցներին է ուղակվում սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտ չներկայացրած «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի hs.partners@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից, քարտուղարի qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրություն, որի համաձայն վերոնշյալ ընկերությունը ներկայացրել է նոր գնային առաջարկ PDF ֆայլի միջոցով, որով չի արտացոլվում ներկայացված գումարի չափը: Այնուհետև Հանձնաժողովի քարտուղաի կողմից 12:59-ի մասնակիցներին է ուղակվում բանակցությունները ավարտված լինելու մասին հաղորդագրություն, որից հետո՝ ժամը 13:02-ին «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3 800 000 ՀՀ դրամի գնային առաջարկը չի դիտարկվում:

Պատվիրատուի կողմից՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված Բողոքներ քննող անձին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 3 900 000 ՀՀ դրամի նոր գնային առաջարկ, որը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել է Գեղամ Հարությունյանի կողմից 29.12.2020թ.-ին ժամը 12:56-ին: Հանձնաժողովի 08.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 3 900 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ առկա է հակասություն

Հանձնաժողովի 25.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված և նույն հանձնաժողովի քարտուղարի կողմից գնման ընթացակարգի մասնակիցներին ներկայացված ծանուցումների միջև, մասնավորապես, թիվ 2 արձանագրությամբ նշվել է, որ բանակցությունների վարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 29.12.2020թ.-ը ժամը 12:00-ն, իսկ ծանուցմամբ նշվել է, որ 29.12.2020թ.-ը ժամը 12:00-ն բանակցություններին ներկայանալու վերջնաժամկետն է: Այսինքն՝ մի դեպքում նշվել է բանակցությունների վերջնաժամկետը՝ չնշելով բանակցությունների սկզբի մասին, իսկ մյուս դեպքում՝ նշելով բանակցություններին ներկայանալու վերջնաժամկետի սկզբի մասին, չի նշել դրա ավարտի մասին որևէ տեղեկատվություն: Սույն պարագայում Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է հստակ նշվեր բանակցությունների սկսման և ավարտի մասին, հստակ սահմանելով դրա վարման կարգը. ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից ևս երկու անգամ փոփոխվել է բանակցությունների վերջնաժամկետը, առաջին դեպքում այն սահմանելով մինչև 12:30-ը, իսկ այնուհետև մինչև 13:00-ն: Բացի այդ, վերջինիս կողմից ժամը 12:59-ին՝ մինչև սահմանված ժամկետի լրանալը, մասնակիցներին է ուղակվում բանակցություններն ավարտված լինելու մասին հաղորդագրություն՝ օբյեկտիվորեն սահմանափակելով մասնակիցներին իրենց վերջնական գնային առաջարկը ներկայացնելու հնարավորությունից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հանձնաժողովի քարտուղարի կողմից ընդունվել և մասնակիցներին է ներկայացվել գնման ընթացակարգին մասնակցության հայտ չներկայացրած «Էյչ Էս Փարթներս» ՍՊԸ-ի hs.partners@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից, քարտուղարի qaxgnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված հաղորդագրությամբ ներկայացված PDF ֆայլի միջոցով ուղարկված փաստաթուղթը:

Բացի այդ, հատկանշական է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3 900 000 ՀՀ դրամի գնային առաջարկը հաստատվել է Գեղամ Հարությունյանի կողմից 29.12.2021թ.-ին ժամը 12:56-ին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այնինչ հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկված էլեկտրոնային հաղորդագրությամբ տեղեկացրել է, որ «Ինվենթ Սիթի» ՍՊԸ-ն ֆիզիկապես մասնակցում է բանակցություններին:

Համադրելով վերը նշված հանգամանքները Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սկզբունքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ նման բանակցություններ անցկացնելու պայմաններում «Լեմուր» ՍՊԸ-ի, ինչպես նաև գնման ընթացակարգի այլ մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ չի ապահովվել, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ է առաջացվել: Բողոքներ քննող անձը հավելում է, որ նման պայմաններում Պատվիրատուն չի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լեմուր» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը պետք է բավարարել մասնակի՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը՝ հրավիրելով նոր բանակցություններ՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության պահպանմամբ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված «ՁՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման

արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Բողոքաբերը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք: Սույն գործով «Լեմուր» ՍՊԸ-ն, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու համար հիմք հանդիսացած Պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տրված որևէ գործողության կամ անգործության: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Բողոքաբերն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից 12.01.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/01 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել Չարենցավանի համայնքապետարանի կողմից միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ԳՀԾՁԲ-2021/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 08.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը:

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**